

որ կայ այս երկու գոհարազատ հայերուն նըկարագրին միջև:

Նփրեմ գրեթէ արդիականի մը փրկիւսփայլութեամբ վարժ, կիրթ եւ վերլուծող զօրաւոր միտք մը ունէր, տեսակ մը ժէ դարեան հայ միջազգայնական մը, որ թափանցեր էր մարդկային նկարագրի ելեւէջներուն: Առանց բաժնելու իր դատելակերպը կարելի չէ Անգլիացի Պրատունի նման չենթարկուիլ Նփրեմի համոզիչ տեսութեանց: Նփրեմի մօտ կը պակասէին ազատամիտ պիտակին տակ պարտըկիլ ջանացող մոլեռանդներու կաշկանդեալ մտային արտայայտութիւնները: Ան իրապէս կրթըւած միտք մը ունէր եւ որոշ կերպով արեւելեան ճակատագրական վարդապետութեան հաւատացող էր: Նոյն ատեն լաւ ապրող մըն էր, կենցաղասէր, առատաձեռն, — յատկութիւններ, որոնք հանդուրժելի էին, որովհետեւ ան ունէր կեանքի իրականութեանց փորձառութիւնները, պատրաստուած մտքի մարդանքննելով եւ իրատես կեանքը համեմատելու, արժէքաւորելու կարողութեամբ:

Հալէպցի Տէր Սարգիսն ալ ոչ միայն նըւիրուած գոհարազատ մըն էր, այլեւ արուեստասէր եւ ճշմարիտ վաճառական մը, որ նոյնպէս մարդուած միտք ունէր, զբասէր էր եւ տաղասաց:

Արդեօք գոհարներու հետ առեւտուրը նոզ մեր վաճառականները իրապէս ենթակա՞յ էին իրենց առած ու ծախած գոհարներուն ըզմայլելի փայլին: Հաւանաբար, քանի որ անոնց մէջ հին ատեն անանուն տաղասացներէ մինչեւ Եւրոպացիներու սքանչացումը վայելող ազատամիտ, իշխանակերպ, վաճառականներ կային: Նոյնիսկ կրնանք ըսել, թէ մինչեւ մեր օրերը փարիզարնակ մեր գոհարավաճառները ամէն տեսակ մեր առեւտրականներուն ամենէն աւելի արուեստասէր, կենցաղասէր, հետաքրքրական եւ շնորհալի դասը կը կազմեն: Անոնցմէ համեմատաբար մեծ թիւ մը կը հետաքրքրուի հայ ազգային հին մշակոյթի նըմոյշներով (ձեռագիր, եւն.), որոնցմէ հատկապէս հաւաքածոնք ալ կազմած են:

Նոյն այս ատենները (1675) Փարիզի մէջ կը հանդիպինք Ռաֆայէլ Ռուպլի անուն գոհարավաճառ հայու մը: Ռուպլի Պարսկաստանէն աղամանդ եւ մարդարիտ կը ներածէ Փարիզ: Գատական խնդրի մը պատճառաւ, որ մինչեւ 1678 տարին կը տեւէ, յայտնի կ'ըլլայ Փարիզ գտնուող այս հայ գոհարավաճառի մասին: 19)

Նոր Զուղայի դիւանին մէջ կայ հետաքրքրական վաւերագրութիւն մը, ուր կը ցուցակագրուի գոհարավաճառ հայու մը ապրանքը: Այս թուղթը Նոր Զուղայեցի Ազգայ Գրիգոր Այլգարեանցի մէկ հաշիւն է. —

«Պօղոսի որդի Պետրոսին խէտ, Ա. Թասփիլով ամանաթ ունեմք, էսայ որ ներքոյ գրեցի:

«Ա. դանայ մեծ լալ, որ է 65 դիրէթ: Ա. դանայ լալ, որ է 18 դիրէթ: Ա. դանայ լալ որ է 14 եւ կէս դիրէթ: Ա. դանայ լալ որ է 8 դիրէթ: Ա. դանայ լալ որ է 10 դիրէթ: Ա. դանայ կապոյտ եաղութ 105 դիրէթ: Ա. դանայ դեղին եաղութ 136 դիրէթ: Ա. կանանչ Ա. դեղին եւ Ա. ճերմակ անհլօր արծաթ մատանի: Ա. դանայ լալ մատանի արծաթ: Ա. դանայ լալ թախտայ, ճիգ 13 եւ կէս դիրէթ: Ա. դանայ լալ բաղամի 22 եւ կէս դիրէթ: 26 դիրէթ ըսիցայ եաղութ: 8 հատ ոււլայի: 16 ճերմակ բուրսաղ: Ա. դեղին բուրսաղ: Ա. ճերմակ բլօր գուշվարայ: Ա. հատ կարմիր եաղութ»: Ասոնցմէ զատ «Աստուծով տանն կայ Բ. դանայ լալ հընդի 103 դիրէթ: Է. դանայ գմբութ՝ քաշնայ 94 դիրէթ: 33 թուրայայ ոսկի: 6 դանայ ոսկի, որ Ե. անոցայ եւս Ա. դանայ: Զամնայ 6 ոսկի: Ա. դանայ լալ արծաթ մատանի: Ա. դանայ սէլանի անհլօր արծաթ մատանի»: 20)

Ահաւասիկ եւ թարգմանութիւնը. —

«Պօղոսի որդի Պետրոսին քով մէկ ցուցա-

19) Rev. Etudes Armenienne, 1922, p. 88:

20) «Պատ. Նոր Զուղայու»: — Ա. մաս, էջ 163: